

Հաստատված է՝

ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի 2018թ.

դեկտեմբերի 5-ի № 3 նիստի որոշմամբ

ԵՊԼՀ գիտական խորհրդի նախագահ՝



Կ. Վ. Հարությունյան

**ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵՋՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊԼՀ) Ֆինանսական վարչությունը համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում է, որը իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ԵՊԼՀ-ի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված գործառույթներ՝ ԵՊԼՀ-ի ֆինանսական գործառույթների և հաշվապահական հաշվառման վարման բնագավառում:
2. Վարչությունը ստեղծվում, վերակազմակերպվում և գործունեությունը դադարեցնում է համաձայն ԵՊԼՀ կանոնադրության՝ Հոգաբարձուների խորհրդի հաստատմամբ՝ գիտխորհրդի ներկայացմամբ:
3. Վարչության կանոնադրությունը հաստատում է ԵՊԼՀ-ի Գիտական խորհուրդը:
4. Վարչությունն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ օրենսդրությանը, այլ իրավական ակտերին, ինչպես նաև ԵՊԼՀ-ի կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:
5. Վարչության լիազորությունները սահմանվում են սույն կանոնադրությամբ, այլ իրավական ակտերով և ԵՊԼՀ-ի ռեկտորի հրամանով:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱԶՄԸ

6. Վարչության կառուցվածքը.

ԵՊԼՀ-ի ֆինանսական վարչությունը բաղկացած է հետևյալ երկու բաժիններից՝

- արտաքին ֆինանսական միջոցների կառավարման բաժին
- հաշվապահություն

7. Վարչության կազմը.

- 1) Վարչության աշխատողների թիվն ու մասնագիտական կազմը սահմանվում է ԵՊԼՀ-ի հաստիքացուցակով,
- 2) Վարչության աշխատողների գործառույթները, լիազորությունները, ինչպես նաև մասնագիտական որակավորումները, իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են,
- 3) անհրաժեշտությունից ելնելով՝ վարչության պետի առաջարկությամբ վարչության կանոնադրական խնդիրների լուծման համար կարող են ստեղծվել ժամանակավոր հանձնաժողովներ և աշխատանքային խմբեր կամ հրավիրվել արտաքին փորձագետներ:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8. Վարչության խնդիրներն են՝

- 1) ԵՊԼՀ-ի բյուջեի նախագծման և միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման ապահովում,
- 2) ԵՊԼՀ-ի միջնաժամկետ ծախսային ծրագրի իրականացման ապահովում,
- 3) ԵՊԼՀ-ի հաշվապահական հաշվառման վարում,
- 4) ԵՊԼՀ-ի ֆինանսական և հաշվապահական հաշվետվությունների կազմում և ներկայացում,
- 5) ԵՊԼՀ-ի սեփական միջոցների պահպանման, նյութական արժեքների, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների օգտագործման նկատմամբ հսկողության իրականացում,
- 6) Հաշվապահական հաշվառման քաղաքականության իրագործում՝ հաշվապահական հաշվառման վերաբերյալ ՀՀ օրենսդրությանը համապատասխան և ԵՊԼՀ-ի գործունեության առանձնահատկությունների և կառուցվածքի, նրա ֆինանսական կայունության պահպանման առանձնահատկություններից ելնելով,
- 7) ԵՊԼՀ-ի ֆինանսական կայունության ապահովում, ֆինանսական միոցների կուտակման և անձեռնմխելի ֆոնդի ստեղծման և համալրման իրականացում,
- 8) ԵՊԼՀ-ի եկամուտների և ծախսերի վերլուծության իրականացում:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Վարչության գործառույթներն են.

- 1) Ապահովել ԵՊԼՀ-ի ֆինանսական հոսքերի կառավարումը և ներքին հսկողությունը,
- 2) ձեռնարկել օրենսդրությամբ սահմանված միջոցներ ֆինանսական պարտավորությունների, հիմնական միջոցների կառավարման նպատակով,
- 3) իրականացնել միջնաժամկետ ծախսային ծրագրի և տարեկան/ ծրագրային բյուջեի նախագծերի կազմում և ներկայացում համապատասխան մարմիններին,
- 4) իրականացնել ֆինանսավորման ենթակա ծրագրերի կազմման և կատարված ծախսերի հաշվառման գործառույթներ,
- 5) ապահովել ֆինանսական հաշվետվությունների կազմումը և օրենսդրությամբ սահմանված կարգով լիազոր մարմինն ներկայացում,
- 6) աջակցել պայմանագրերի կազմման աշխատանքների,
- 7) կազմել եկամուտների և ծախսերի կանխատեսումներ,
- 8) ապահովել ֆինանսական հատկացումների օպտիմալ օգտագործումը
- 9) Սահմանված կարգով հաշվառել դրամական միջոցները, նյութական արժեքները, իրականացնել դրանց գույքագրման և դրանց շարժի հետ կապված գործառույթները,
- 10) պահովել հիմնական միջոցների, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների հաշվառման, դրանց հետ կապված գործառույթների հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլման, շրջանառության ծախսերի, ծառայությունների և աշխատանքների կատարման, ֆինանսական գործունեության արդյունքների հաշվառումը,
- 11) պահովել հաշվապահական փաստաթղթերի ձևակերպման օրինականությունը և ճշտությունը, կատարվող աշխատանքների (մատուցվող ծառայությունների) հիմնավորված հաշվարկների կազմումը, աշխատավարձերի հաշվարկումը, պետական և համայնքային բյուջեներ հարկերի և վճարների, սոցիալական ֆոնդ և այլ վճարների համար միջոցների ճշգրիտ հաշվեգրումը, փոխանցումը,
- 12) ԵՊԼՀ-ի ռեկտորին ներկայացնել առաջարկություն ֆինանսական կառավարման արդյունավետության բարձրացման և ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման վերաբերյալ,
- 13) ներկայացնել առաջարկություն ԵՊԼՀ-ի ղեկավարությանը հաշվապահական հաշվառման հաշվետվությունների և վերլուծական տվյալների հիման վրա ռիսկերի գնահատման համար,
- 14) իրականացնել ֆինանսական և հաշվապահական փաստաթղթերի պահպանումը և օժանդակում է դրանց արխիվացմանը,
- 15) իրականացնել ի ռեկտորի հրամաններով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթներից բխող այլ լիազորություններ:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

10. Վարչության կառավարումն իրականացնում է ԵՊԼՀ-ի ռեկտորը:

11. Վարչության աշխատակազմի անմիջական ղեկավարումն իրականացնում է վարչության պետը, որը պաշտոնի է նշանակվում և պաշտոնից ազատվում է ԵՊԼՀ-ի ռեկտորի կողմից:

12. Վարչության պետը հաշվետու է ԵՊԼՀ-ի ռեկտորին:

13. Իր գործունեության ընթացքում վարչությունն առաջնորդվում է ՀՀ օրենսդրությամբ, հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ և սույն կանոնադրությամբ: